

ԿՈՄԻՏԱՍԻ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱՔԱՅԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Նիկոլայ Կոստանդյան (Հայաստան)
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ**

«...հսկապէս ես յանցաւոր եմ. այսքան ժամանակ է քեզ բան չեմ գրում: Ինչ անենք,
ես նամակի բարեկամ չեմ»¹:

Այս խոստովանությունը, որի հեղինակը Կոմիտասն է, ուղղված է հայ դաշնակահարուհի, երգչուհի (մեցցո-սոպրանո), երաժշտագետ և մանկավարժ Մարգարիտ Բաքայանին (1874-1968)՝ 1912 թ. դեկտեմբերի 15-ին Կ.Պոլսից նրան հասցեագրված նամակում:

Մ. Բաքայանը ծանոթացել էր Կոմիտասի հետ 1895 թ.: Այս առիթով մեջբերենք Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին հասցեագրված՝ 1895 թ. հոկտեմբերի 9-ի նամակը, որտեղ Կոմիտասը գրում է.

«Յարգոյ Տէ՛ր,

Ողջ հասանք Տփիսիս. Ձեր տրուած նամակը յանձնեցի պ<արոն> Բժիշկ Բաբայեանցին և յիշեցրի բժշկի մասին. ասաց, որ նամակ է գրել եւ կգրէ մի երկրորդն եւ: Շնորհակալ եմ, աջակցութիւն խոստացաւ իմ գործիս համար, որի մանրամասնութիւնը գրել եմ Հ<այր> Յուսիկին, երևի կպատմէ, իսկ վերջնականը կգրեմ Ձեզ»²: Նամակում հիշատակված բժիշկ Բաքայանցն, ամենայն հավանակությամբ, Մարգարիտ Բաքայանի հայրն է՝ բժիշկ Ավետիք Բաքայանը, իսկ Կարապետ Կոստանյանը Մարգարիտ Բաքայանի հորաքրոջ ամուսինն էր:

1904 թ. Մ. Բաքայանն ընտանիքով տեղափոխվել է Փարիզ և մշտական բնակություն հաստատել այնտեղ: Շուտով Մ. Բաքայանը դառնում է Կոմիտասի մերձավորագույն բարեկամը, նրան քաջալերող խորհրդատուն ու քննադատը, հետագայում՝ Կոմիտասյան խնամատար հանձնաժողովի եռանդուն կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը: Լինելով Փարիզի կոմիտասյան հանձնաժողովի փոխնախագահ, իսկ Արշակ Չոպանյանի մահից հետո՝ նախագահ, նա է կորստից փրկել ու Հայաստան ուղարկել Կոմիտասի ձեռագրերը: Մ. Բաքայանը *«հավաքել է Կոմիտասի ձեռագրերը, հրատարակել որոշ գործեր, նրա մասին գրել հողվածաշար»³:* Փարիզում նա հիմնադրել է

¹ **Կոմիտաս Վարդապետ**, *Նամականի*, աշխատասիրութեամբ Գուրգեն Գասպարեանի, Երեւան, «Սարգիս հաչեւեց-Փրինթինգո» հրատ., 2009, էջ 211:

² Նույն տեղում, էջ 27:

³ **Ռ. Աթայան**, Բաքայան Մարգարիտ Ավետիքի, տե՛ս *Հայկական սովետական հանրագիտարան*, հատ. 2, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1976, էջ 187:

երգեցողության դպրոց՝ զբաղվելով մանկավարժական գործունեությամբ, իսկ Եվրոպայում ծավալած համերգային գործունեությամբ ու ֆրանսիական մամուլում հրատարակված երաժշտագիտական հոդվածներով նպաստել հայ երաժշտության համաշխարհային ճանաչմանը:

Կոմիտասի նամականին նրա գրական ժառանգության կարևոր մասն է: Այն ընդգրկում է շուրջ երկու տասնամյակ: Առաջին պահպանված նամակը գրված է 1894 թ. փետրվարի 6-ին և հասցեագրված է Մետրոպ եպիսկոպոս Սմբատյանին, ով Կոմիտասին ձեռնադրել էր արեղա, իսկ վերջինը՝ 1914 թ. հոկտեմբերի 13-ին և ուղղված է Երվանդ Հակոբյանին: Կոմիտասի նամակները հասցեագրված են Սոֆյա Բաբայանին, Մարիամ Թումանյանին, Հովհաննես Թումանյանին, Մատթեոս Իզմիրյանին, Գարեգին Լևոնյանին, Բարսեղ Կորգանյանին, Անտոն Մայիլյանին, Վահրամ Մանկունուն, Սպիրիդոն Մելիքյանին, Ալեքսանդր Մյասնիկյանին, Արշակ Չոպանյանին, Սիրանուշիկ, Նիկողայոս Տիգրանյանին և ուրիշներին:

Իր ստեղծագործական երկարատև կյանքի ընթացքում Մարգարիտ Բաբայանը նամակագրություն է ունեցել Մուշեղ Աղայանի, Ռուբեն Ջարյանի, Ռոբերտ Աթայանի, Շուշանիկ Բաբայան-Լալուայի, Արշակ Չոպանյանի, Վարդան Սարգսյանի, Պոլինա Վիարդոյի և էլի շատ ու շատ երաժիշտների ու մտավորականների հետ:

Ծավալուն ու արժեքավոր է Կոմիտասի և Մարգարիտ Բաբայանի նամակագրությունը: Կոմիտասի՝ իրեն հասցեագրված նամակներից որոշակի հատվածներ Մ. Բաբայանը հրատարակել է Փարիզում՝ 1935 թ. լույս տեսած իր հոդվածում⁴: Նամակների՝ Հայաստանում հանգրվանելու գործում անուրանալի է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի (հետագայում՝ Արվեստի ինստիտուտի) դերը: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (այսուհետ՝ ԳԱԹ) Մ. Բաբայանի դիվանում հայտնաբերեցինք նրան ուղղված՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի վարիչ Ռուբեն Ջարյանի և գիտական քարտուղար Մաթևոս Մուրադյանի նամակը, որը լույս է սփռում մեզ հետաքրքրող նամակների ճակատագրի վրա: *«Երախտագիտության խորին զգացմունքով ստրացանք Կոմիտասյան հանձնաժողովի և անձամբ Ձեր կողմից ուղարկված Կոմիտասի ձեռագիր և տպագիր նյութերը, ինչպես և Ձեր հրատարակություններից մեկական օրինակ:*

⁴ Տե՛ս Մ. Բաբայան, Կոմիտաս վարդապետ իր նամակների միջով, *Մշակույթ*, Փարիզ, 1935, N 3-4, էջ 153-165:

Սրացված նյութերը բացառիկ արժեք են ներկայացնում մեր դարավոր երաժշտական կուլտուրայի պատմության համար: Մեզ հայտնի է, որ Ձեր և Կոմիտասի միջև երկար տարիներ շարունակ եղել է նամակագրական կապ: Մենք, դժբախտաբար, այդ նամակագրության վերաբերյալ ոչ մի փաստական նյութ չունենք: Եթե Ձեզ մոտ պահպանվել են այդ նամակները, ապա մեծապես խնդրում ենք ընկ. Վլասովի միջոցով ուղարկել մեզ կամ դրանց ձեռագրերը և կամ վավերացված պատճենները: Մեծապես ցանկալի է ստանալ նաև այլ անձանց ուղղված նամակները: Դրանք չափազանց անհրաժեշտ են մեր հրատարակության վերջին հատրի համար»⁵:

Ռ. Զարյանի և Մ. Մուրադյանի՝ Մ. Բաբայանին հասցեագրված 1956 թ. հունիսի 25-ի նամակում կարդում ենք. «Ձեր սույն թվի մայիսի 26-ի նամակն սրացանք: Մեծ հետաքրքրությամբ մենք ծանոթացանք այն նամակների հետ, որոնք Դուք, հարգելի օրհորդ Բաբայան, այնքան ջերմ սիրով ու նվիրվածությամբ պահպանելուց հետո հրապարակել էիք «Մշակույթ»-ի մեջ: Բայց քանի որ Ձեր խոստովանությամբ դրանք հատվածներ են միայն և իրոք այդպիսի տպավորություն էլ գործում են ընթերցողի վրա, իսկ մեզ Կոմիտասի երկերի լիակատար ժողովածուի վերջին հատրի համար անհրաժեշտ են նամակների լրիվ տեքստերը, ուստի և մենք ստիպված ենք դարձյալ դիմել Ձեզ և խնդրել ուղարկել մեզ այդ նամակների ամբողջական տեքստը կամ լուսանկարված և կամ Ձեր կողմից վավերացված պատճեններով: Ձեր նամակները մեծ արժեք են ներկայացնում և անհրաժեշտ է դրանք հրատարակել առանց հապավումների»⁶:

Մ. Բաբայանին հասցեագրված՝ Ռոբերտ Աթայանի 1960 թ. նոյեմբերի 15-ի նամակում կարդում ենք. «Երկու օր առաջ ուղարկեցի վերջին շնորհակալական նամակս այն մեծարժեք նվիրատվության համար, որ Դուք այնքան սիրահոժար կերպով արեցիք մեզ, Կոմիտասի բոլոր երկրպագուներին, մեր ժողովրդին, Ձեր ուղարկած՝ Կոմիտասի նվիրական նամակներով: Ավելորդ է ասել, որ նամակները շատ մեծ տպավորություն թողեցին և թողնում են ամենուր, որտեղ լսում են դրանց մասին կամ տեսնում են դրանք: Մասնավորապես, ես ներկայացրի դրանք Կոմպոզիտորների միության վարչությանը, բոլոր ընկերները երախտագիտության մեծ զգացում արտահայտեցին: Արդեն պայմանավորվել ենք «Հանդես»-ի խմբագրության հետ, հրատարակելու համար: Հեղափոխում, Կոմիտասի պահպանված բոլոր նամակների ժողովածուն պետք է լույս տեսնի

⁵ Ռոբեն Զարյանի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, մեքենագիր 3 թերթ, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 83:

⁶ Ռոբեն Զարյանի և Մաթևոս Մուրադյանի 1956թ. հունիսի 25-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, մեքենագիր 2 թերթ, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 83:

առանձին գրքով, որը կցվելու է նրա երկերի ժողովածուին, ավելի ճիշտ կազմելու է դրա մեկ (վերջին) հատորը»⁷: Ռ. Աթայանը նամակներն արտագրում է և անհրաժեշտ ծանոթագրություններով պատրաստում տպագրության⁸:

Նախատեսված էր, որ «Կոմիտասի երկերի ժողովածուի վերջին հատորը պետք է ընդգրկի նրա ինքնակենսագրությունը, նամակները և այլ նման գրություններ: Սակայն վերջին հատորը (դա երկի 12-րդը կլինի) դեռ շատ ուշ լույս կտեսնի: Այդ պատճառով ես մտադրվել եմ առանց վերջին հատորին սպասելու մի գեղեցիկ գրքույկով տպագրության ներկայացնել Կոմիտասի մինչ այժմ հայտնաբերված ու հավաքված բոլոր նամակները: Երևանում ունենք հետաքրքրական նամակներ, գրված Հովհ. Թումանյանին, Ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին, դերասանուհի Սիրանույշին, այսպեղ են Արշակ Չոպանյանին գրված նամակների մեծ մասը, վերջապես, Ձեզ գրված նամակները և այլն: Բայց, իհարկե, դա դեռ բոլորը չէ: Կոմիտասի նամակները երբեմն հայտնվում են նույնիսկ պատահական մարդկանց մոտ, ուստի բուն հասցեատերերի մոտ փնտրելը միանգամայն օրինական է»⁹:

Ռ. Աթայանը շարունակել է իր քայլերը Կոմիտասի Նամակնու հրատարակության ուղղությամբ. «Ինչպես ասել եմ Ձեզ, տպագրության եմ պատրաստում Կոմիտասի նամակների ժողովածուն»¹⁰: Ապա՝ «Բոլոր գործերիս զուգահեռ, շարունակում եմ հավաքել Կոմիտասի նամակները, եկող տարի տպագրության հանձնելու համար նրա նամակների ժողովածուն: Սա ևս շատ հետաքրքիր է լինելու: Մոտ 120 նամակ հավաքել եմ: Երբ այդ նամակները դասավորում եմ խրոնոլոգիկ կարգով, Կոմիտասի հետաքրքրական, թեև ողբերգական, բայց շատ ուսանելի կյանքի ողջ պատկերն է ստացվում»¹¹:

Սակայն Կոմիտասի նամակնու հրատարակությունը իրականացրեց ոչ թե ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, այլ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը՝ 2000, 2007 և 2009 թթ.¹²:

⁷ Ռ. Աթայանի 1960 թ. նոյեմբերի 15-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, **ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ**, N 62:

⁸ Ռ. Աթայանի 1960 թ. նոյեմբերի 15-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, **ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ**, N 62:

⁹ Ռ. Աթայանի 1962 թ. ապրիլի 14-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, **ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ**, N 62:

¹⁰ Ռ. Աթայանի 1962 թ. նոյեմբերի 21-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, **ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ**, N 62:

¹¹ Ռ. Աթայանի 1963 թ. սեպտեմբերի 14-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, **ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ**, N 62:

¹² **Կոմիտաս**, *Նամակներ*, Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, 2000: **Կոմիտաս**, *Նամակներ*, Երկրորդ, լրացված տպագրություն, Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, 2007: **Կոմիտաս Վարդապետ**, *Նամակներ*: Մեր հոգվածում հիմք ենք ունեցել Կոմիտասի Նամակնու վերջին՝ 2009 թ. հրատարակությունը:

Սույն հոդվածում կանդիդատնանք Կոմիտասի և Մ. Բաբայանի նամակագրությանը, որն ընդգրկում է 1905-1914 թթ.: Կոմիտասը շատ բարձր է գնահատել Մ. Բաբայանի գործունեությունը: 1912 թ. նա նկատել է. «Ուրախ եմ, որ դուն էլ գոհ ես քու աշակերտներից ու ահագին գործ ես կատարում. արդէն իսկ քեզ ճանաչեցին Փարիզում, այս մի մեծ ու ուժեղ գրաական է գործերիդ յաջողութեանը համար, եւ որ գլխաւորն է, ապագադ պայծառացաւ ու մի ընդարձակ տեղ գրաւեցիր հայ երաժշտութեան պատմութեան մէջ քո աննկուն ու եռանդուն աշխատութեամբդ օտարութեան մէջ, ուր քեզ աւելի՛ են հասկանում, քան քու հայրենիքումը...»¹³:

Մեր նպատակն է՝ տարաբնույթ բովանդակությամբ նամակների միջոցով ուրվագծել Կոմիտասի՝ արվեստագետի, մարդու և մտածողի կերպարը:

Թեև Կոմիտասն իր նամակագրության մեջ զուսպ է ու ինքնամիտի, այդուամենայնիվ՝ Մ. Բաբայանին ուղղված նամակներում դրսևորվում է նրա հետաքրքրությունների բազմակողմանիությունը, մտքի սրությունն ու անկախությունը, կենդանի ու նուրբ դիտողականությունը, շրջապատող աշխարհի հանդեպ վերին աստիճանի զգայուն վերաբերմունքը:

Մ. Բաբայանին հասցեագրած իր առաջին նամակը Կոմիտասը գրել է 1905 թ. հունիսի 25-ին Էջմիածնից, իսկ վերջինը՝ 1914 թ. հունիսի 23-ին՝ Փարիզից: Ինչ վերաբերում է Մ. Բաբայանի՝ Կոմիտասին ուղղված նամակներին, ապա դրանցից պահպանվել են ընդամենը վեցը: Դրանք գրվել են 1910 թ. մայիսի 15-20-ը՝ Լոնդոնից, 1911 թ. սեպտեմբերի 8-ին՝ Փարիզից, 1912 թ. հուլիսի 21-ին՝ Փարիզից, 1912 թ. հուլիսի 23-ին՝ Փարիզից, 1912 թ. նոյեմբերի 3-ին՝ Ժնևից և 1913 թ. ապրիլի 10-ին՝ Փարիզից:

Կոմիտասի և Մ.Բաբայանի նամակագրության ուսումնասիրությունը ցույց տվեց հետևյալը.

Ա. Ցավոք, նամակագրությունն ամբողջությամբ չի պահպանվել, թերի է, բացակայում են մի շարք նամակներ, որոնց մասին տեղեկանում ենք այլ նամակներից: Այսպես՝ 1905 թ. հունիսի 25-ին Էջմիածնից Կոմիտասը գրում է. «Մեծարգո՛յ Օրիորդ Մարգարիտ Բաբայեան, Ձեր նամակն սրացայ անկողնումն հիանդ պատկած ժամանակ»¹⁴: Այս նամակը, որի մասին հիշատակում է Կոմիտասը, չի պահպանվել:

1916 թ. հոկտեմբերի 23-ի իր նամակում Կոմիտասը գրում է. «Սիրելի՛ օր. Մարգարիտ,

¹³ Կոմիտաս Վարդապետ, *Նամականի*, էջ 210:

¹⁴ Նույն տեղում, էջ 88:

*Ձեր նամակիկն ինձ անչափ ուրախացրեց...*¹⁵: Այս «նամակիկը» նույնպես չի պահպանվել:

1906 թ. դեկտեմբերի 6-ին Կոմիտասը Փարիզից գրում է. «Սիրելի՛ օրիորդ Մարգարիտ, Ձեր նամակն ինձ շատ մխիթարեց...»¹⁶:

1907 թ. սեպտեմբերի սկզբին Բեռլինից գրում է՝ «Սիրելի՛ Մարգարիտ, Ձեր նամակն ինձ շատ ուրախացրեց»¹⁷:

1909 թ. էջմիածնից գրում է՝ «Որքա՞ն ուրախացայ նամակիդ»¹⁸:

1910 թ. դեկտեմբերի 17-ին Ջմյունիայից Կոմիտասը գրում է. «Սիրելի օրիորդ Մարգո, Նամակն ստացայ, շատ ուրախ եմ, որ բոլորդ էլ ողջ եւ առողջ էք, զիս կը յիշէք կոր եղեր»¹⁹:

1911 թ. հունիսի 12-ին Կահիրեից գրում է.

*«Սիրելի օրիորդ Մարգարիտ, Նամակդ ստացայ. սրտագին շնորհակալություններս փռածդ լիաբեռն ու կարուկ բացապրությունների համար»*²⁰:

Իսկ Մ. Բաբայանին Կ. Պոլսից հասցեագրած Կոմիտասի 1912 թ. մայիսի 12-ի նամակում կարդում ենք. «Ամերիկա գնալու մասին էիր գրել, բայց առ այժմ ստիպուած եմ այդ միտքը յետաձգել, մինչեւ որ մի գործ գլուխ բերեմ»²¹:

Իսկ արդեն 1914 թ. գրված նամակում կարդում ենք. «Ցաւում եմ, որ նամակդ շատ ուշ հասաւ...»²²:

Նշված բոլոր նամակները դեռևս հայտնաբերված չեն:

Բ. Նամակներից «առաջին ձեռքից» տեղեկություններն ենք ստանում Կոմիտասի գործունեության վերաբերյալ: Նա պատմում է առաջիկա ու հեռանկարային ծրագրերի, տեղի ունեցած համերգների, դասախոսությունների և ստեղծագործական աշխատանքների մասին:

Այսպես՝ 1907 թ. հունիսի 7-ին Լոզանից գրում է. «Շընեի համերգն սքանչելի անցաւ. դասախօսութիւն արի ժընեւ, Լօզան եւ Բերն: Այսօր կրկին Լօզան եկանք, Արշակը պէտք է կարդայ հայ բանաստեղծութեան եւ երաժշտութեան մասին, եւ ես պէտք է երգեմ»²³:

¹⁵ Նույն տեղում, էջ 103:

¹⁶ Նույն տեղում, էջ 106:

¹⁷ Նույն տեղում, էջ 124:

¹⁸ Նույն տեղում, էջ 176:

¹⁹ Նույն տեղում, էջ 192:

²⁰ Նույն տեղում, էջ 197:

²¹ Նույն տեղում, էջ 209:

²² Նույն տեղում, էջ 228:

²³ Նույն տեղում, էջ 121:

1908 թ. հուլիսի 2-ի նամակում Կոմիտասը տեղեկացնում է. «Այս ուսումնական տարին անցաւ ինձ համար բաւական շահաւէտ կերպով: Տոսի 5 համերգ եւ 6 դասախօսութիւն կարդացի: Մեծ քանակութեամբ երգեր եմ դաշնակել երգի եւ նուագարանի համար: Այսել եմ **Հայ քնարի** միաձայն հրատարակութիւնը մեր դպրոցների եւ առձեռն գործածութեան համար փոքրիկ տնտեսականերով. իրաքանչիւր տնտեսական պարունակելու է միայն մի տասնեակ երգ. երեւի այս աշնան Ա. տնտեսականը կը հրատարակեն»²⁴: Այնուհետև անդրադառնում է Շուշանիկ Բաբայանի համար նախատեսված գործերին. «Շուշիկին ասացէք, որ **Բանգին** պատրաստ է բոլորովին, եւ ո՛չ մի ճապաղ բան չեմ թողել. շատ պարզ ու միաձեւ, միեւնոյն ոճով կազմեցի մինչեւ վերջը, այնպէս որ մի սիրուն ամբողջութիւն է կազմում: **Շորորի** նոր կտորներ եմ ձայնի առել եւ լրացրել. պատրաստ է նոյնպէս **Հեքիարին**: Տեղական բոլոր պարերը՝ կենտրոնապարերը կազմել եմ ճիշտ ուղարկածս «Շուշիկի» պարի ձեւով, չեմ իմանում հաւանե՞ց. ես որ շատ եմ հաւանել, չը գիտեմ»²⁵:

Կոմիտասը դրվագներ է ներկայացնում իր համերգային գործունեությունից: Այսպես՝ 1910 թ. դեկտեմբերի 17-ին Զմյուռնիայից գրած նամակում նա տեղեկացնում է. «Սիրելիս, ես այս ամառն այստեղ եմ, սկսելով հայրենիքիցս, 5 համերգ կազմակերպեցի: Այս նամակն էլ գրում եմ Զմյուռնիայից, ուր 6-ը պատրաստելու վերայ եմ. յետոյ պիտի դառնամ Կ. Պոլիս եւ փամ 7-ը՝ յօգուտ ազգային հիանդանոցի, ապա պիտի մեկնեմ Ալաբազար՝ 8-ը փալու, եթէ ուրիշ տեղից հրաւեր չստանամ ուղղակի Վիեննայի վրայով Փարիզ պիտի գամ, բայց ե՞րբ, չեմ իմանում. այնուամենայնիւ կը գրեմ»²⁶:

Ուշագրավ են տեղեկությունները Եգիպտոսում 1911 թ. տեղի ունեցած համերգների մասին: «Աղէքսանդրիոյ համերգն էլ շատ յաջողութեամբ պատկուեցաւ եւ այժմ Գահիրէ եմ. տեղիս հայութիւնը փափագում է խումբը տեղափոխել եւ համերգը կրկնել»²⁷: «Այս տարի,- շարունակում է Կոմիտասը,- փութել եմ 17 համերգ եւ դասախօսել եմ 12 անգամ»²⁸:

Իր սրտագին բարեկամ Մ. Բաբայանի հետ Կոմիտասը կիսվում է իր ծրագրերի՝ մասնավորապէս Կ. Պոլսում կոնսերվատորիայի կազմակերպման մասին: «Յոյս ունեմ,- գրում է Կահիրեից 1911 թ. հունիսի 12-ին,- Կ. Պոլսոյ մէջ մի երաժշտարան բանալու, բայց դեռ խնդիրը ծեծուում է խօսքով, երբոր հոսսները

²⁴ Նույն տեղում, էջ 141:

²⁵ Նույն տեղում, էջ 142:

²⁶ Նույն տեղում, էջ 192:

²⁷ Նույն տեղում, էջ 197:

²⁸ Նույն տեղում:

գործի անցնեն, բանն էլ կը պասկուի»²⁹: Մեկ տարի անց՝ 1912 թ. մարտին խոստովանում է. «Այժմ բոլոր ուժերս կրկնապատկել եմ, որ երաժշտականի գործը գլուխ բերեմ. ուզում եմ նախ շէնքը գլուխ բերել, որ տեսական լինի. ուստի գործը ձգձգում է մի քիչ, բայց հոգ չէ, յոյս վառ է, անպատճառ գլուխ պիտի հանեմ եւ քեզ էլ պիտի քաշ տամ էստեղ»³⁰: Ապա շարունակում է. «Ա՛խ, որքա՛ն եմ ցանկանում, որ մեր երաժշտանոցը բացուէր եւ դու էլ գայիր այստեղ ու միասին առաջ մղէինք երաժշտութիւնը մեր շրջանակի մէջ. չես իմանում թէ ինչ ընդունակութիւններ կան եւ որքան սիրում են գեղարուեստ, թէ՛ս անպատրաստ եմ եւ չեն հասկանում, երբ դպրոցը բացուի, մեծ բան կարող ենք անել. հենց որ մի քիչ ապահով դրութեան մէջ ընկնի գործը, քեզ կը գրեմ եւ կը գաս»³¹:

Առանձնահատուկ ոգևորությամբ է Կոմիտասը խոսում Կ. Պոլսում իր ստեղծած «Գուսան» երգչախմբի մասին: «Խումբս,- գրում է Կ. Պոլսից 1912 թ. մայիսի 12-ին,- որի անունը «Գուսան» եմ դրել (հին Գողթան հայ երգիչների, ժողովրդական աշուղների անունով, որ Գուսան էին կոչում), շատ յառաջադիմեց. եկող տարի աւելի կատարեալ կը լինի, եւ շատ բան կարող եմ անել: Ժողովրդի մէջ համակրանքս շատ է, բայց դեռ շարժուող չե՛ն. ստրկութիւնն այնպէ՛ս է ճգմել, որ ինքնորոյն ու վստահ գործի եռանդ չէ մնացել մէջերնին»³²:

Մինչ այդ՝ 1912 թ. մարտին գրել էր. «Մշտական խումբ ունեմ, բաղկացած 200 հոգուց, երկսեռ եւ ընտիր ծայներ. թէ՛ ընդունելութիւնը եւ թէ՛ ընտրութիւնը խիստ եմ կատարել, որպէսզի գործը հիմնատր բռնեմ»³³:

Նամակագրության մեջ Կոմիտասը նշանակալի տեղ է հատկացրել իր ստեղծագործական աշխատանքի հարցերին: 1906 թ. հուլիսի 14-ին Բեռլինից գրում է. «Ես այժմ երգերի տպագրութեամբ եմ զբաղուած եւ շարունակ նորանոր դիտողութիւններ եմ անում. այնպէս որ երբ գործը վերջանայ շատ հետաքրքրական է լինելու, թէ ինչպէս մեր ժողովրդի ամբողջ սիրտն ու հոգին ներքին ու արտաքին կեանքը խորապէս դրոշմուած է ձայների եւ տաղաշափութեան մէջ»³⁴:

Գ. Նամակներում ուրվագծվում են Կոմիտասի գեղագիտական հայացքները, ձևակերպվում հայ երաժշտության վերաբերյալ նրա տեսակետները: Այսպես՝ 1907 թ. սեպտեմբերի սկզբին Բեռլինից գրված նամակում կարդում ենք հետևյալը. «... բայց չէ՞ որ, իսկապէս ո՛չ մի գեղարուեստական գործ վերջակէտ չունի, այնպէս

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում, էջ 205:

³¹ Նույն տեղում, էջ 206:

³² Նույն տեղում, էջ 209:

³³ Նույն տեղում, էջ 205:

³⁴ Նույն տեղում, էջ 97:

էլ իմը. եթէ երկրորդ տպագրութեան արժանի լինեն նոյն երգերը, շաւր բաներ արդէն ինքս եմ նկատել ու փոխելու՝ **պարզելու եմ**. երբ մարդ մի բանով երկար ժամանակ ու անընդհատ, տաք զբաղում է, քննական ուշքը կորցնում է եւ նորա տեղն է բռնում դէպի միշտ բարձր մղող եւ նոյնիսկ, մասամբ էլ կոյր եռանդը, որ պարզ գաղափարի ու երեւակայութեան առաջ մի յափշտակիչ, դիւթական, նուրբ քօղ է քաշում, որ մի առ ժամանակ սխալներն ու անհարթութիւնները կամ պարզ ու վսեմ, դիւրմբռնելի ու գործի ոգուն համապատասխանող կամ նորա բնոյթը որոշող գծերն անյայտացնում ու չբացնում է եւ մարդ իբր կատարեալ բան է տեսնում»³⁵:

Անդրադառնալով հայ երաժշտութեան ներդաշնակման առանձնահատկութիւններին՝ Կոմիտասը նշում է. «Հայ եղանակները, ինչպէս նոցա ոգին պահանջում է, ներդաշնակելը որքան պարզ է, նոյնքան անելի դժուար է. յետոյ, դեռ մենք հայերս, պէտք է մեզ համար ոճ ստեղծենք ու ապա թէ համարձակ առաջ գնանք: Ես դեռ ցարդ ստացել եմ ուրիշներից եւ այժմ, նոր եմ սկսում (ըստ իմ հասկացողութեան եւ ճաշակի, նախապատրաստութեան ու պաշարի) հայ եղանակներին համաձայն ոճով դաշնակել: Ժամանակ է լինում, որ ես ընկղմած եմ կատարելապէս միայն հայ երաժշտութեան մէջ եւ ահա **այն ժամանակ** ես գրում եմ, ստեղծում եմ այնպիսի բան, ինչպիսին յարմար է մեր երաժշտութեան ոգուն. բայց լինում է եւ ժամանակ, որ, առանց իմ կամքի, ընկնում եմ մի այնպիսի երեւակայութեան շաղի վերայ, որ կա՛մ հայկական չէ, կա՛մ նորա կողքիցն է անցնում:

Բայց եւ այնպէս ես պիտի հասնեմ նպատակիս, նոյնիսկ, եթէ ամբողջ կեանքս իսկ վրայ դնեմ: Դորա համար, շաւր թանգ են իմ սրտակից բարեկամներիս իւրաքանչիւր, նոյնիսկ չնչին համարած կամ բժախնդիր նկատողութիւնները. ես կատարեալ չեմ, ինչպէս բոլոր մարդիկ, բայց կատարելութեան ձգտող, նոյնիսկ այն դէպքում, երբ ես մերժում <եմ> մէկի կարծիքը. թէւ մերժում եմ առժամանակ, բայց այդ ինձ մտածել է տալիս, թէ ինչու՞ այս կամ այն կտորը դուր չէ եկել մէկին կամ միւսին եւ ես աշխատում եմ հարցը լուծել»³⁶:

Նամակներում ակնհայտ է Կոմիտասի հիացումը հայ ժողովրդի մտավոր և գեղարվեստական ներուժով. «... մեր մտքի ու սրտի զէնքն ա՛յնքան թափանցիկ, ա՛յնքան կենսունակ է, որ օտար մտքերն ու սրտերը՝ ուզե՛ն-չուզե՛ն պիտի գերեն. ահա՛, ա՛յս է կենդանի զէնքը, որի զինուորն եմ ե՛ւ ես, ե՛ւ դու, ե՛ւ բոլոր նոքա, որոնք իրենց ցեղի ազնիւ միտքն ու սիրտն են հրապարակ հանում եւ այնու՛ շարժում

³⁵ Նոյն տեղում, էջ 124-125:

³⁶ Նոյն տեղում, էջ 125:

սառն քաղաքագէտի պաղ սիրտը՝ մի փոքր էլ մեր կենսունակ եւ մարդկութեան պիտանի ժողովրդին ու ազգին նայելու, խնայելու եւ նորա մասին մտածելու»³⁷:

Մ. Բաբայանին հասցեագրված նամակներում թեև գլխավորապես իշխում է զվարթ տրամադրությունն, ու մեզ է ներկայանում կատակասեր Կոմիտասը, սակայն մերթ ընդ մերթ հնչում են նաև հուսահատական նոտաներ: Այսպես, 1906 թ. հուլիսին Կոմիտասը Բեռլինից գրում է. «Ինձ հրախրել են նորից պաշտօնապես ուսուցչութեան էջմիածին: Մերժեցի, որովհետեւ վճռել եմ դպրոցական ասպարէզից բոլորովին քաշուել եւ իմ գլխի ճարն անել: Ոչ ոք գրեթէ չի մտածում ինձ ձեռք մեկնել, ուժերս սպառում են, եռանդս հասնում, հասակս անցնում:

Եթէ եմ այստեղ, հաւատարմէք միայն եւ միայն իմ մի քանի կոպէկ ռոճիկովս, որի վերայ եթէ յոյս դնեմ, քաղցած կը մեռնեմ. ահա այս բոլորը ինձ ստիպում են, քաշուել, օր առաջ կեանք ապահովել մի քիչ, ապա թէ գործի կպչել:

Այս եօթ փարի ձրի ծառայելով, թոքերս մաշելով, առողջութիւնս քայքայելով համբերեցի, ոչ մի փրկումն չը հանեցի. բայց փոխանակ խրախոյսի ո՛չ թէ նախատինք, երանի՛ նախատինք լինէր, լոկ անփարբերութիւնով վարձապրեցին ինձ:

Իհարկէ, վերարկու ենք հագել, պարտական ենք, իշու պէս չարքաշ լինել, կարօտ կեանք վարել. վա՛յ քեզ, թէ բերանդ բաց ես արել, էլ հաստափոր, էլ ձրիակեր, էլ պորտաբոյծ, էլ ինչ չգիտեմ անուններ ժառանգես: Է՛հ, էլ ինչու Ձեր գլուխն եմ ցաւացնում. սիրտս կտոր կտոր է լինում, չեմ իմանում, ինչպէս հովանամ: Ներողութիւն, որ Ձեզ անհանգստացնում եմ անձնական բաներով»³⁸:

Նույն՝ 1906 թ. դեկտեմբերի 6-ին արդեն Փարիզից գրած նամակում կարդում ենք.

«Սիրելի՛ օրհորդ Մարգարիտ,

Ձեր նամակն ինձ շատ մխթարեց, բայց եւ այնպէս, մարդիկ հաւատում են ւսելի վար լուրերին, քան լաւերին. եւ անուանարկուածը երկար ջանքեր պէտք է գործ դնէ, որ կարողանայ անպիտանների միտքն էլ մաքրէ: Բայց կատէք, ի՞նչ փոյթ, թող չարն իր չարութեան մէջ խեղդուի: Իրաւ է, ես էլ եմ կրկնում ժողովրդի հետ այն վեհ միտքը, թէ՛ «գէշ մարդու օր արեւը սեւ հողի փակով արեք»։ միեւնոյն ժամանակ աջ ու ձախ եմ նայում, տեսնում, որ մարդիկ առուել վարահոգի են քան բարեհոգի. չը կան, եթէ կան, չեն երեւում, այնպիսիները, որոնք չարերի վերայ արհամարհանք փածեն, ընդհակառակը, մարդկային թոյլ եւ շատ փկար կողմերից մէկն էլ այն է, որ լսածին հաւատալ են ուզում առանց ճշմարտութեան կշիռ ունենալու, այո՛, շատ հեշտ է դատելը՝ մանաւանդ ուրիշին, բայց դատուել ո՛վ է

³⁷ Նույն տեղում, էջ 223:

³⁸ Նույն տեղում, էջ 98:

ցանկանում. մարդասպանը նոյնիսկ դարից խուսափում է, ո՛ր քի մնաց անմեղն ու անպարտը: Ես էլ, թէեւ ներս<ս> բոլորովին մաքուր ու ջինջ է, ինչպէս պայծառ ու յստակ վրակ, բայց չար մարդիկ քար են ձգում ու պղտորում: Անշուշտ, կանցնէ պղտորումը, էլի վճիտ կը լինի, բայց եւ այնպէս պղտորելուց յետոյ: Գէթ մի այնպիսի չար բան արած լինէի, որ անպարտաբեր լինէր իմ կոչման, սիրտս չէր ցաւի, կասէի՝ «Հնձիր՝ ցանածո», բայց չարի բերանը չոյի է լցրած»³⁹:

Եվ իհարկեւ, մեծ երաժշտին ամոքում է արվեստի հզոր ուժը: «Էլի մոռացել եմ բոլոր բաները,- գրում է Կոմիտասը,- իմ ազնիւ, հաւատարիմ նուագարանս, որ հասարակ սնդուկ է, մեքայի թելով, նա՛ անգամ ինձ հասկանում է եւ ես իմ սիրտը բաց եմ անում նորա առաջ, նա ինձ կարեկցում է, որպէս ինքս կցանկայի, նա ինձ հասկանում է, որպէս ես ինքս ինձ, նա ինձ մխիթարում է իմ սրտից բոխած հեծկլրանքների արծազանգն ինձ անդրադարձնելով, եւ ես էլի մխիթարում եմ ինձ եւ ասում, որ կայ բնութեան մէջ մի ազնիւ բան՝ գեղարուեստը, որին ամենքը մատչելի չեն, եւ հէնց այնտեղ եմ գտնում իմ անդորրութիւնը եւ հանգստութիւնը եւ զգում եմ, որ մի վայրկեան հեռու եմ սլացել աշխարհի անօրէնութիւններից: Յաւն անցաւ, սպին մնաց: Աստուած իրանց բարին տայ: Վաղը կը գամ եւ փեփրակներն էլ հեփս կը բերեմ»⁴⁰: Ապա կրկին վերադառնում է Կոմիտասի խառնվածքին բնորոշ լավատեսութիւնը. «Բոլորին նոյից բալեւ եմ զլում, սար ապլիք, ուլախ լինիք, չալը չոլում չոլանա, իսկ սատանան կոպանա: Ամէ՛ն»⁴¹:

1909 թ. Էջմիածնից Կոմիտասը գրում է. «...հոգիս բերանս է հասել. երեսակայի, որ շրջապատուած եմ թանձր մառախուղով, ուզում եմ լոյս, պայծառ լոյս տեսնել, հեռանալ վերև, շար վեր, այրող արեւի հեփ ապրել, բայց ճանապարհն չեմ գտնում, անիրաւ օդի մէջ խեղդամահ եմ լինում. մարդ չը կայ, որին բանաս սիրտըդ, մարդ չը կայ, որից մի բան լսես, նստում եմ առաւօտից մինչեւ իրիկուն բուրդիս պէս իմ սեղանի առաջ, գրում ու գրում... Գալիս է հանգստի ըրպէ, մարդ ես որոնում, որ գրածդ երգես, նուագես եւ կարծիք լսես,- չես գտնում: Դուրս եմ գալիս եւ վագրի պէս այս ու այն կողմն եմ շուռ գալիս մեն մենակ իմ պարտիզում եւ փանիքի վերայ:

Ես զարմանում եմ, թէ ինչու՞ մինչեւ այժմ դեռ չեմ խելագարուել այս մթնոլորտի խարդախ վայրերում: Մէկ ուզում եմ թոչեմ, հեռու միայնակ, մէկ ուզում եմ փակուեմ մենակ ու ճգնեմ, բայց ի՞նչ եմ անում, որ չեմ ճգնում... այո, բայց ո՛չ այսպիսի, այլ իմ մուսայիս հեփն եմ ուզում միայնակ ապրել, որ սիրտըս չը պղտորուի, միտքըս չը խարդախուի, հոգիս չի խռովի եւ խիղճըս չը մեռնի... Բայց

³⁹ Նույն տեղում, էջ 106:

⁴⁰ Նույն տեղում, էջ 107:

⁴¹ Նույն տեղում, էջ 109:

եւ այնպէս չեն յուսահատուել. աշխատում են, շար բան են գրել, շար բան են արել, քեզ էլ չեն մոռացել եւ քո բաժինն էլ են պատրաստել, որ եւ ստացիր այս գրիս հետ միասին, իբր նմոյշ շարից»⁴²:

Դ. Հայտնի է, որ Կոմիտասի գրական ժառանգության կարևոր մասն են նրա մի քանի տասնյակ բանաստեղծությունները, որոնք նրա կյանքի օրոք չեն տպագրվել: Ինչպէս նկատել է Լևոն Միրիջանյանը. «Պարզապես հեղինակն իրեն չի համարել կոչումնավոր բանաստեղծ և գրել է ինքն իր համար: Երբեմն միայն՝ ամենամտերիմներից մեկի պըռում թողել է որևէ չափածո հիշատակ»⁴³: Օրինակ՝ Մ. Բաբայանին հասցեագրված նամակներից մեկում Կոմիտասը գետեղել է «Պըզտի մոծակ» բանաստեղծությունը⁴⁴:

Ե. Նամակներում հառնում է Կոմիտասի պարզ ու անմիջական, սրամիտ ու մարդամոտ կերպարը: Ակնհայտ է Կոմիտասի հումորը: Բավական է նշել 1907 թ. փետրվարի 7-ին Փարիզից գրված նամակը՝

«Սիրելի՛ օլիոլդ Մալգայիս,

Նախ եւ ալաջ կը հալցընեն Ձեւ թանկագին այրոջութիւնը. մեզ ոլ հալցընէք, փալք եւ գոհութիւն Աստըծու սարս փլուզ ենք եւ այրոջ»⁴⁵: Նամակի վերջում նկարում է «Ես էլ ես եմ» «ինքնանկարը»⁴⁶:

Ամփոփելով մեր համառոտ անդրադարձը Կոմիտասի և Մ. Բաբայանի նամակագրությանը՝ կարող ենք եզրակացնել, որ այն մի կողմից կարևոր նշանակություն ունի Կոմիտասի գեղագիտական հայացքներն ու ստեղծագործական սկզբունքները լիարժեք հասկանալու համար, մյուս կողմից՝ հավաստի և անփոխարինելի փաստական աղբյուր է Կոմիտասի համերգային ու ստեղծագործական գործունեության վերաբերյալ և լույս է սփռում մեծ երաժշտի կյանքի ու ստեղծագործության առանձին դրվագների ու իրադարձությունների վրա:

Ամփոփում

Ծավալուն ու արժեքավոր է Կոմիտասի և Մարգարիտ Բաբայանի նամակագրությունը: Մ. Բաբայանին հասցեագրած իր առաջին նամակը Կոմիտասը գրել է 1905 թ. հունիսի 25-ին Էջմիածնից, իսկ վերջինը՝ 1914 թ. հունիսի 23-ին՝ Փարիզից: Ինչ վերաբերում է Մ. Բաբայանի՝ Կոմիտասին ուղղված նամակներին, ապա դրանցից պահպանվել են ընդամենը վեցը: Դրանք գրվել են 1910 թ. մայիսի 15-20 Լոնդոնից, 1911 թ. հոկտեմբերի 18-ին Փարիզից, 1912 թ. հուլիսի 21-ին Փարիզից, 1912 թ. հուլիսի 23-ին Փարիզից, 1912 թ.

⁴² Նույն տեղում, էջ 176-177:

⁴³ Կոմիտաս, Բանաստեղծություններ, Երևան, «Հայաստան» հրատ., 1969, էջ 3:

⁴⁴ Կոմիտաս Վարդապետ, Նամականի, էջ 108:

⁴⁵ Նույն տեղում, էջ 112:

⁴⁶ Նույն տեղում, էջ 114:

նոյեմբերի 3-ին ժնկից և 1913 թ. ապրիլի 10-ին Փարիզից: Մեր նպատակն է՝ տարաբնույթ բովանդակությամբ նամակների միջոցով ուրվագծել Կոմիտասի՝ արվեստագետի, մարդու և մտածողի կերպարը: Թեև Կոմիտասն իր նամակագրության մեջ զուսպ է ու ինքնամոլի, այդուամենայնիվ՝ Մ. Բաբայանին ուղղված նամակներում դրսևորվում է նրա հետաքրքրությունների բազմակողմանիությունը, մտքի սրությունն ու անկախությունը, կենդանի ու նուրբ դիտողականությունը, շրջապատող աշխարհի հանդեպ վերին աստիճանի զգայուն վերաբերմունքը:

Բանալի բառեր՝ Կոմիտաս, Մարգարիտ Բաբայան, նամակագրություն:

ПЕРЕПИСКА КОМИТАСА И МАРГАРИТ БАБАЯН

Резюме

Николай Костандян (Армения)

Музей-институт Комитаса

Переписка Комитаса и Маргарит Бабаян обширна и значительна. Первое письмо, адресованное М. Бабаян, Комитас написал 25 июня 1905 г. из Эчмиадзина, последнее — 23 июня 1914 г. из Парижа. Из писем М. Бабаян, адресованных Комитасу, сохранилось лишь шесть: эти письма были отправлены с 15 по 20 мая 1910 г. из Лондона, 18 октября 1911 г. из Парижа, 21 июля 1912 г. из Парижа, 23 июля 1912 г. из Парижа, 3 ноября 1912 г. из Женевы и 10 апреля 1913 г. из Парижа. Наша цель — очертить образ Комитаса — художника, человека и мыслителя, посредством анализа его писем, которые характеризуются разноплановым содержанием. Несмотря на сдержанный и замкнутый тон высказывания Комитаса, в письмах, адресованных М. Бабаян проявляется разносторонность его интересов, острота и независимость его мысли, живая и тонкая наблюдательность, в высшей степени чуткое отношение к окружающему его миру.

В результате анализа переписки Комитаса с М. Бабаян мы пришли к следующим выводам:

1. К сожалению, переписка сохранилась не в полном объеме, отсутствует ряд писем, о которых мы узнаем из других сохранившихся писем.

2. В письмах мы “из первых рук” получаем сведения о деятельности Комитаса; он рассказывает о своих ближайших и будущих планах, состоявшихся концертах, о лекциях и творческой работе.

3. В письмах проявляются эстетические взгляды Комитаса, формулируются его положения об армянской музыке.

4. Известно, что Комитас является автором несколько десятков стихотворений, которые не были опубликованы при его жизни. Одно из этих стихотворений мы находим в письме, адресованном М. Бабаян.

5. В письмах перед нами предстает простой, непосредственный, остроумный и общительный образ Комитаса. Он обладал тонким чувством юмора; достаточно упомянуть, например, письмо, отправленное М. Бабаян 7 февраля 1907 г. из Парижа.

В результате краткого обзора автор заключает, что переписка Комитаса и М. Бабаян имеет важное значение с точки зрения целостного понимания эстетических взглядов и творческих принципов Комитаса. С другой стороны, переписка является достоверным и уникальным фактологическим источником для изучения концертной и творческой деятельности Комитаса и проявляет свет на отдельные фрагменты и события его жизни и деятельности.

Ключевые слова: Комитас, Маргарит Бабаян, переписка.

CORRESPONDENCE OF KOMITAS AND MARGARIT BABAYAN

Abstract

Nikolay Kostandyan (Armenia)
Komitas Museum-Institute

The correspondence of Komitas and Margarit Babayan is extensive and valuable. Komitas addressed his first letter to M. Babayan from Echmidzin on June 25, 1905. The last one was written from Paris on June 23, 1914. As for the letters written by M. Babayan addressed to Komitas, only six of them have survived. They were written from London on May 15-20, 1910; from Paris on October 18, 1911; from Paris on June 21, 1912; from Paris on July 23, 1912; from Geneva on November 3, 1912; and from Paris on April 10, 1913. The aim of this paper is to outline the character of Komitas as an artist, a person and a scholar through the letters. Although Komitas is restrained and self-contained in his letters, however, in the letters addressed to M. Babayan, the comprehensiveness of his interests, mental deepness and independence, live and subtle viewership, sensitive attitude towards the surrounding world are displayed.

The study of Komitas's and Babayan's correspondence demonstrated the following:

1. Unfortunately, the correspondence did not survive holistically. It is incomplete, a number of letters lack, and we get information about them from other sources.

2. Information about Komitas's activities are available from the "first hand". He tells about the future and prospective plans, about his concerts, lectures and works.

3. Komitas's aesthetical views are evident from the letters, as well as his viewpoints on Armenian music are formulated there.

4. As it is known, dozens of poems present an important part of Komitas' legacy. Those poems were not published during Komitas's life time. In one of the letters addressed to Babayan, a poem by Komitas is written.

5. Komitas' simple, frank, humorous and sociable character is obvious from the letters. Especially Komitas's humor is evident. The letter written from Paris on February 7, 1907 is enough to argue his humorous mind.

Summarizing the brief review on the correspondence between Komitas and Babayan, the author of this article resumes that it had an important role in better understanding of Komitas's aesthetical views and creative principles. From the other hand, those letters present a reliable and irreplaceable source on Komitas's concert activities and sheds light on definite fragments and events of the life and work of the great musician.

Key words: Komitas, Margarit Babayan, correspondence.